բարուցն և զընութեանցն բարութիւն առաջնորդ Ս. Քաղաքիս, առ ինքն կալեալ ոչ տալով թոյլ հեռանալ բնաւ յինքենէ, զոր սա յօժարութեամբ կատարէր զամենայն հրամայեալսն առ 'ի նմանէ, որ եւ օժանդակութիւն ոչ սակաւ առնէր 'ի չինու�Տնօրինականացն Քրիստոսի, Ծընընդեան՝ և Ս. Փրկչի և Հրեշտակապետաց՝ և Ս. Յակոբայ տաճարացն, երբեմն անձամբ աշխատելով և երբեմն հրամանաւ Գրիգորի Հայրապետին 'ի հեռաւոր և 'ի մերձաւոր տեղիս Նուիրակ գնալով, զորոյ զքաղցր և զհամեստ բարսն տեսանելով՝ սիրէին զնա իբրեւ զառաքեալ 'ի Քրիստոսէ, և յօժար սրտիւ զկամաւոր տուրս և զբաժինս հոգւոց իւրեանց տային 'ի ձեռս նորա, և նա անսխալ զամենայնն հասուցանէր 'ի Ս. Քաղաքն Երուսաղէմ, առ 'ի լնուլ զպակասութիւն եկեղեցւոյն Երուսաղէմի. զի զամս 47 զգործս զայս անտրտունջ կատարեաց։ Ամիր Ազիզ զկնի մահուան Գրիգորի Պատրիարքի՝ եկաց 'ի վանս Սուրբ Յակոբայ՝ նովին առաքինութեամբ, եւ բարի մահուամբ հանգեաւ 'ի Տէր։

ԳԼՈՒԽ ԽԴ.

Պատրիարքութիւն Աստուածատուր Եպիսկոպոսի։ Տեսուչ Նեստորականաց։ Վանորայք Ս. Փրկչի՝ և Ս. Հրեշտակապետաց։ Զարութիւն աւազակաց։ Ամբաստանութիւնք եւ բռնութիւնք այլազգեաց։ Գերեզման Ս. Աստուածածնի։

Զկնի մահուան Գրիգորի Պատրիարքի Պարոն Տէր կոչեցելոյ. ընտրեցաւ յԱթոռ Պատրիարքութեան Աստուածատուր Եպիսկոպոս Տարոնեցի. ձեռնասուն աշակերտ նորին Գրիգորի, որպէս պատուիրեալ էր նա ինքն 'ի կենդանութեան իւրում՝ ընտրել զայն։ Սա ինքն Աստուածատուր յետ ընտրութեան իւրոյ՝ ինքն մատոյց գիր աղաչանաց 'ի Դուռն՝ յաւուրս Սուլթան Իպրահիմայ, ծանուցանելով զվախճան նախորդին իւրոյ՝ եւ զընտրութիւն իւր 'ի տեղի նորա. եւ խնդրեաց հրովարտակաւ հաստատել